ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ և
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ,КУЛЬТУРЫ И СПОРТА

MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT OF REPUBLIC
OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ՔՈԼԵՋ, ՊՈԱԿ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ГУМАНИТАРНЫЙ КОЛЛЕДЖ, ГНКО

YEREVAN STATE COLLEGE OF
HUMANITIES, SNCO

0051, Երևան, Արղության 1, Հեռ./ Тел./ Tel: (374 10) 239991, (374 55) 052038, տնօրեն՝ Մարիամ Մինասյան, 0051, Ереван, Аргутян 1,
директор: Мариам Минасян, 0051, Arghutyan 1, Yerevan, director: Mariam Minasyan, E-mail: yschs.college@gmail.com , ephq.am

N 493-26

29.07.2026թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ ՏԻԿԻՆ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Անդրեասյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ում առկա են «Մաթեմատիկա» - 1 դրույք, «Ֆիզիկա» - 0,5 դրույք, «Իրավունքի հիմունքներ» - 1 դրույք, «Ֆիզկուլտուրա» - 1 դրույք, «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» - 1 դրույք, «Անվտանգություն և առաջին օգնություն» - 1 դրույք, «Թվային գրագիտություն և տեղեկատվական-հաղորդակցական գործիքներ» - 1 դրույք, «Մշակութային բազմազանություն և խուլերի համայնքի պատմություն և սոցիալական կառուցվածք» - 90 ժամ, «Լսողության խնդիրներ ունեցող անձանց հոգեբանություն» - 72 ժամ ծանրաբեռնվածությամբ առարկաների և մոդուլների դասախոսների թափուր տեղեր:

Քոլեջում հայտարարվում է մրցույթ վերոնշյալ թափուր պաշտոնները համալրելու նպատակով:

Փաստաթղթերը ընդունվում են 2026 թվականի հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 12-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 16:00:

Մրցույթը կկայանա 2026թ. օգոստոսի 17-ին և 18ին, ժամը 13:00-ին՝ Քոլեջում:

Կից՝ հայտարարության տեքստը:

Հարգանքով՝

Տնօրեն Ա. Մինասյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀԿԳՄՄՆ «Երևանի պետական հումանիտար քոլեջ» ՊՈԱԿ-ի/այսուհետ՝ Քոլեջ/ «Մաթեմատիկա» - 1 դրույք, «Ֆիզիկա» - 0,5 դրույք, «Իրավունքի հիմունքներ» - 1 դրույք, «Ֆիզկուլտուրա» - 1 դրույք, «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» - 1 դրույք, «Անվտանգություն և առաջին օգնություն» - 1 դրույք, «Թվային գրագիտություն և տեղեկատվական-հաղորդակցական գործիքներ» - 1 դրույք, «Մշակութային բազմազանություն և խուլերի համայնքի պատմություն և սոցիալական կառուցվածք» - 90 ժամ, «Լսողության խնդիրներ ունեցող անձանց հոգեբանություն» - 72 ժամ ծանրաբեռնվածությամբ առարկաների/մոդուլների դասախոսների թափուր տեղերի համար:

Վերոնշյալ թափուր տեղի համար կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,
- Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է ներքոնշյալ

փաստաթղթերը"

1. դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. Անձնագիրը (բնօրինակը և պատճենը),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5. Ինքնակենսագրություն (Ձև 4),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են 2026 թվականի հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 12-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 16:00:

Մրցույթը կկայանա 2026թ" օգոստոսի 17-ին և 18-ին, ժամը 13:00-ին՝ Քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010)23-99-91, (055)05-20-38 հեռախոսահամարներով: